

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Երևան

Երջանիկ ենք Ձեզ ներկայացնելու Մեր շնորհավորանքի խոսքը Նոր տարվա առթիվ և մաղթելու Ձեզ քաջառողջություն և մեր վերածնված Մայր Հայրենիքին հարատև վերելք ու ծաղկում սովետական ազգությունների մեծ ընտանիքում, աշխարհի խաղաղության պայմաններում:

Ամանորին հարգանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվո սեմին ուրախ ենք Ձեզ շնորհավորելու և բերելու Ձեզ Մեր ամենաբարի մաղթանքները Ձեր արևշատության ու Ձեր հայրենաշեն ծրագիրների լիակատար հաջողության համար: Թող Նոր տարին աշխարհին բերի խաղաղություն և համերաշխ գործակցություն բոլոր ազգությունների միջև:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎԻՆ

Մոսկվա

Մեծահարգ Կոնստանտին Միխայլովիչ,

Մեկ համար բացառիկ երջանկություն է հայտնել Ձեզ Ս. Էջմիածնից Մեր ջերմագին շնորհավորանքները գալիք՝ 1986 թվականի առթիվ և ցանկանալ Ձեզ քաջառողջություն ու անսպառ եռանդ Ձեր հայրենասիրական առաքելության ճանապարհին:

Թող նոր տարին լինի առաջընթացի և ծաղկման տարի մեր մեծ և բազմազգ հայրենիքի համար, ամրապնդվի խաղաղությունը մոլորակի վրա և երջանկությունը՝ երկրագնդի բոլոր ժողովուրդների միջև, որի համար Մենք մշտապես վերառաքում ենք Մեր ջերմագին աղոթքները:

Խորին հարգանոք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվո առթիվ սիրով Ձեզ ենք ներկայացնում Մեր շնորհավորանքը և ջերմագին մաղթանքները Ձեր քաջառողջության ու ընտանեկան երջանկության համար: Մնում ենք նաև աղոթող, որ 1986-ը լինի շինարար վերելքի ու ծաղկումի տարի մեր վերածնված երկրի համար և կայուն խաղաղության տարի համայն աշխարհի համար:

Խորին հարգանոք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ստացա Ամանորի առթիվ շնորհավորանքի և բարեմաղթանքի Ձեր հեռագիրը, որի համար հայտնում եմ իմ շնորհակալությունը: Օգտվելով հաճելի առիթից, Նոր տարվա ջերմ շնորհավորանքներ ու ցանկություններ եմ հղում Ձեզ: Թող բացվող՝ 1986-ը մեր հայրենիքի համար երջանկության ու նորանոր նվաճումների տարի լինի, շարունակվի բանականության հաղթարշավը և խաղաղությունը թևածի ամենուրեք: Ձեզ ցանկանում եմ արևշատություն և նոր հաջողություններ խաղաղության, ժողովուրդների միջև բարեկամության ամարպնդման Ձեր ակնիվ գործունեության ասպարեզում:

ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք ամանորյա մեր սրտագին շնորհավորանքները: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, իսկ Ձեր հայրենանվեր գործունեությանը՝ նորանոր հաջողություններ:

Թող 1986 թվականը մեր հայրենիքի և հայ ժողովրդի համար լինի խաղաղության ու բարգավաճման տարի:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ Նոր՝ 1986 թվականի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, մեծ հաջողություններ Ձեր խաղաղասիրական գործունեության մեջ:

Անկեղծ հարգանքներով՝

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Տարեմուտի առթիվ հղում ենք Ձեզ մեր ջերմագին շնորհավորանքները: Սրտանց մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, արևշատ երկար տարիներ, նորանոր հաջողություններ Ձեր հայրենանվեր շինարար գործունեությունում: Թող 1986 թվականը լինի խաղաղության, ժողովուրդների բարեկամության, մեր հայրենիքի բարգավաճման տարի:

Խորին հարգանքներով՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան